ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Երևան, Կառավարական տուն 3

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձանց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնի վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ
(ծածկագիր՝ 3.1-29)

ա) կատարում է վարչական ղեկավարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով

բ) ապահովում է բնակիչների կողմից ստացված դիմումների, բողոքների և տարաբնույթ փաստաթղթերի ընդունումը և աշխատանքներ է իրականացնում դրանց ընթացքի ուղղությամբ։

գ) կազմակերպում է ֆիզիկական և իրավաբանական անձանց հարկերի հաշվառման և հավաքագրման գործընթացը

դ) անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում, նախապատրաստում, վարչական ղեկավարին և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր

ե/ հարկեր չվճարած անձանց մասին տեղեկատվություն է ներկայացնում վարչական ղեկավարին

զ)օժանդակում է քաղաքացիների հետ կնքվող գյուղնշանակության հողերի վարձակալական պայմանագրերի կնքման աշխատանքներին

է) նախապատրաստում է սեփականության իրավունքի վկայականներում տեղ գտած անճշտությունների ուղղման հետ կապված համապատասխան փաստաթղթերը

ը) մասնակցում է համայնքի անասնագլխաքանակի հաշվառման աշխատանքներին

թ) նախապատրաստում է քաղաքաշինության ոլորտի հասցեների տրամադրման որոշումների նախագծերը, պատրաստում և վարչական ղեկավարի վավերացմանն է ներկայացնում համապատասխան տեկանքներ և փաստաթղթեր

ժ) մասնակցում է քաղաքացիների դիմում-բողոքների և նրանց կողմից բարձրացված տարաբնույթ քննարկումներին

ժա) իրականացնում է վարչական ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի կողմից տրված այլ հանձնարարականներ

ժբ) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով չսահմանված, օրենքով, այլ իրավական ակտերով ատեսված այլ իրավունքներ և կրում այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ։

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) ունի առնվազն միջնակարգ կրթություն

բ) ունի ,Համայնքային ծառայության մասինե, ,Տեղական ինքնակառավարման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի՝ անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը

դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնների առաջացման հիմքերիի վերացման ժամկետն է՝ մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնները մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների (մասնակիցներից մեկի) կողմից զբաղեցնելը

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2026 թվականի մարտի 23-ը ժամը 10:00:

Խնդրում ենք դիմումներն ուղարկել միայն էլեկտրոնային տարբերակով՝ e-request.am էլեկտրոնային հասցեին:

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարողեն դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ (ք. Երևան, Կառավարական տուն N 3, հեռ. 010-515131):

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
աշխատակազմ